

tionnée plus haut", c'est-à-dire Khourdik cf. p. 122 et p. 120.

Donc le dernier prince Mamikonien de Bagrévand est Grégoire, personnage distinct de Khourdik.

p. 216, l. 17—19: Grégoire devient lui-même la victime. à la même page, note 1, Laurent identifie timidement Khourdik et Grégoire.

p. 266, l. 24-26: „H [Aschot] avait expédié au calife la tête de Grégoire Makikonien...“

Il faut convenir que Laurent nous donne des renseignements très peu précis sur le dernier prince Mamikonien de Bagré-vand. Remarquons encore que d'après le texte de Vardan, le seul que l'on peut citer pour cet épisode, c'est Aschot et non pas Bogha, qui tranche la tête à Grégoire.

Louvain.

J. MUYLDERMANS



ԱՆՑԱՅԻ ԱՐԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ՄԻԶ

#### **Ф.2. 01 ФБ, ТВСКСОБ**

### (Ծայրականոթիւն:)

4

Արեղահամութիւնը զանգուածային շարժում է եղել։ Զաքարիան ասում է, թէ Մեխևութիւն յարել էին աւելի քան հինգ հարիւր հոգի ու միայն գուեցիկ աշխարհականք, այլ եւ տգետք երիցունք եւ փարթամ եւ մեծազգի մարդիկը ։

Աղանգն ուներ նաեւ որոշ կազմակերպութիւն։ Հինգ հարիւր հետեւորդների միջից Մեծի լուսն ընտրել էր տասներկու կտրիճ ու զօրեղ մարդ, նրանց մէջքին թուր կապել, ձեռները տուել լախտ, “որ է թոփուղ”, եւ այս թոփուղաւորներին անուանել առաքեալ։ Եւ ինչ որ ինքը կամենում էր, սրանց ձեռքով էր կատարում, թէ ծեծում էր, թէ բանտարկում եւ այլն։

Մեխլուի շարժումն աչքի է ընկնում նաեւ  
երկու յատկութեամբ, որոնցից առաջինն անըն-

չասիրութիւնն է, ճգնական սակաւապէտութիւնը:  
“Ոչ առնոյր ինչ յումեքէ... եւ ասէր.

Գրիստոսի աշակերտացն չէ պիտոյ ստանալ ուսկի  
կամ արծաթ եւ կամ զգենուլ հանդերձս աղ-  
նիւս, այլ մազ եւ շալ պիտոյ է նոցա զգենուլ<sup>1</sup> :

“ Ήξ ουτεκρ δε οξ γράμμερ, — φασθαίτι μὲν ηγενήτη Ταραχάνωλγούν, — δε οξ απονηρη μηδε τέκει ήτο πρόδωρος καθεώδης ή μαραθώνωδης καθεύδης;

Հարժման երկրորդ գիծը հաւասարաբութիւնն է, քը իստոնէական սպառողական համայնավարութիւնը:

“Ոչ առնոյր ինչ յումեքէ, այլ ձեռամբ  
երկոտասանիցն եւ բաժանէր հինգ հարիւրիցն։  
Աղանդաւորների այս հաւասարարութեան  
զոհ է գնում Քանաքեռոցի Եղիայի պառաւ կնոջ  
հորթը, որ բռնում են՝ ասելով։ “Մատաղ է  
եկեալ Վարդապետին։”

“Զենին, — ասում է Զպարիան ծաղը բելով, — որթն եւ մասն մասն բաժանեցին, մինչեւ եւ կաշին եւ զապաւառն եւս բաժանեցին, որպէս օքչնութիւն<sup>3</sup>:

Նշանակալից է, որ ըստ Զաքարիայի՝ Մբելուն ունէր նաեւ “գիրք մի ժողովածու եւ նովաւ ասէր, զի՞ն որ ասէր ո՞ւ Ասկայն այն հատուածը, որ Մբելուն կարդում է Երեւանի վիճաբանութեան ժամանակ, աւետարանից է:

"Եւ բացեալ զգիրքն եւ ասէ. սա գրեալ  
է վասն սեւագլուոց, զի ասէ. մի ստանայք մի  
ոսկի եւ մի արծաթ եւ այն<sup>4</sup>։

Արդեօք աբեղահալածը գործ էր ածում  
իսկապէս մի ժողովածու, որ կազմուած էր տար-  
բեր երկրից առած քաղուածներից, թէ չէնց  
աւետարանն էր նրա նեցուկը, չնար չկայ որոշե-  
լու: Թերեւս Զաքարիայի համար դժուար էր  
խոսութանել, թէ աղանդաւորը բացառապէս  
աւետարանի վրայ էր հիմնում: Դարանալցին  
աւելի որոշ է շեշտում, որ Մեխլոն սուրբ գրքով  
ու այլ կանոնական գրքերով չէր վարդապետում:

“Եւ ոչ օրինօք աստուածաշունչ գրոց  
վկայութեամբ խօսէր եւ ոչ կանոնիւք սուրբ  
հարցն երից սուրբ ժողովոցն եւ ոչ սուրբ հա-  
րանց գրոցն, այլ մտացածին բանիւք յինքենէ,  
զոր ինչ բղսէր ի չար դիւական ոգւոցն, զայն  
խօսէր եւ մաքառէր ընդ ուկտսականսն<sup>5</sup>”:

1 Հայոց պատմական Ա, 49:

<sup>2</sup> Պարանազթի, 456:

<sup>3</sup> *Qāpawātīw*, 8, 51-52.

• ♪ Λεπτομέρια, Βιβλίο 50-51:

5 Դարձնազգի, 457:

Ասացինք, որ Աղուանից երկրում Մեխուլուի հետեւորդների թիւը համառ էր 500ի: Սակայն նրա ժողովրդականութիւնը հետեւորդների շրջանակից շատ հեռու է տարածում: Ճանապարհորդութեան ժամանակ, որ կատարում է Աղուանից երկրից դէպի երեւան, նրան հետեւում է մի մեծ բազմութիւն:

“Իսկ Ամիրգունա խանն ելեալ ի բերդէն՝ երթայր ի զնին եւ հայեցեալ տեսանէ բանակն եւ զարհուրեալ հարցանէ.

— Ո՞չ, զի՞նչ է գումարն այն:

Ասեն.

— Նա է Մեխլու բաբայն, զոր պատմէին<sup>1</sup>: Երեւանից քանաքեռ հասնելիս նրան խուռն բազմութեամբ ընդառաջում է ամբոխը: Սակայն Մեխլուին ցոյց տուած ընդունելութիւնը ոչ թէ բերանաբաց հանդիսատեսների գործ էր, այլ զմայլած երկրպագուների:

“Եւ տգէտ ուամիկքն քանաքեռոյ, յորժամ լոււան զգալուստ նորա, գրոհ տուեալ ելին ընդ առաջ նորա, մինչեւ տնարդել աղջկունքն եւս գնային ի տես կախարդին այնորիկ, որը երթեալ քսէին զստորոտ հանդերձի նորա յերեսս իւրեանց: Եւ բազում ողջագուրելով ընդունէին զնա... Եւ առեալ զկախարդն՝ բերին ի քանաքեռ եւ տարան ի Ներքի եկեղեցին: Եւ ի չբաւել տեղոյն՝ ելեալ նստաւ ի վերայ սեղանին եւ զօղանչէր դէպի յաբեղայսն<sup>2</sup>:

Տեսանք, որ Զաքարիան ասում է, թէ Մեխլուի շարժմանը մասնակից էին ուամիկներ, քահանաներ եւ հարուստներ: Դարանաղին վկայելով, թէ “Հաճոյ էր ամենեցունց տգէտ աշխարհականացն իւր անօրէն մոլի կատաղութիւնն<sup>3</sup>”, շեշտում է մի հանդամանք, որ շատ բնորոշ է դարի հասարակական շերտերի տրամադրութիւններն ուսումնասիրելու տեսակէտից:

“Ժամանակագրութեան՝ հեղինակը բազմաթիւ էջերում նիզակ է ձօձում հայ առեւտրական դրամագլխի այն ժամանակուայ ամենից նշանաւոր հատուածի — նոր ջուղայեցոյ դէմ: Ժամանակագիրը մի շաբար յոռի պատկերներով ցուցադրում է, թէ առեւտրական դրամագլխի կուտակումն առաջ էր բերել Տին կենցաղի ու աշխարհայեցքի վերաբննութիւն, որի ժամանակ նորագրեան մարմինը թօթափում էր միջնադարեան հոգու կապանքները: Վերջինիս ներկայացուցիչ դարանաղին սաստիկ ատելու-

թեամբ խօսելով նոր ջուղայեցիների մասին՝ ասում է, թէ Ս'եխուի սկսած շարժումն առանձնապէս նրանց սրտով էր, եւ ամէնից աւելի նրանք էին խրախուսում Մեխլուին ու տարածում նրա համբաւը:

Անկասկած, Մեխլուն հայ առեւտրականների դրօշակիրը չէր, այլ տնանկ զանգուածների, սակայն “գովլաթաւորները, ծափահարում էին մարտնչող ու ահաւոր աբեղահալածին, որովհետեւ սա վարկաբեկում էր կուսակրօններին, որոնք հանրային կեանքի տէր ու տնօրէնն էին: Կուսակրօնութեան ու աշխարհիկ հոգեւորականութեան նշանաբաններով մղուող պայքարին մասնակցում էին հանրային զանազան սյժեր, որոնցից մէկը քարշում, ձգում էր դէպի վաղօրեայ սակաւապէտ ու Ճգնական քրիստոնէութիւնը, միւսը՝ դէպի միջնադարեան աւատական նորագրեան քաղաքացիական բանապաշտութիւնը, իսկ երրորդը՝ դէպի նորագրեան քաղաքացիական բանապաշտութիւնը:

## Դ.

Մեխլուի գործունէութիւնն սկսուել է Աղուանից աշխարհում, գանձասարի Յովշաննէս Ը. Կաթուղիկոսի օրով, այսինքն Ժ. Գարի վերջին քառորդում: Ժէ. Գարի սկզբում աբեղահալածների այս աղանդապետին արդէն տեսնում ենք Աղուանից երկրի սահմաններից դուրս:

Մեխլուն Գեղամայ գաւառի վրայով ճանապարհում է Երեւան: Նրան հետեւում է աղանդապետների ու համակիների մեծ բազմութիւն, որոնց մէջ են նաեւ 12 թոփուղաւորները: Քանաքեռի վրայով Երեւան հասնելով նա ուղակի դիմում է բերդը, որտեղ նրան սպասում էին “Խարտեաշ առիւծը, — Երեւանի կուսակալ Ամիրգունա Խանը, Աւետիս կաթուղիկոսն ու երկու եպիսկոպոս: Բերդում Խանը Մեխլուին ենթարկում է հարց ու փորձի, ապա ձեռաց մի հրապարակական բանավէճ է սարգում, որին մասնակցում են աղանդապետն ու կաթուղիկոսն, իրեւ հակածառողներ: Գառնեցի Զաքար-բէկը, “որ թողեալ էր զարեղայութիւնն, թարգմանում էր նրանց ասածները:

“Եւ ապա ասաց Խանն.

— Այս ճշմարիտ է (խօսքը վերաբերում է կաթուղիկոսին. Թ. Ա.), իսկ դու հարամզագայ ես, վասն այն ես զգեցեալ զայն հանդերձ, զի պատրես զանել քրիստոնեայսդ:

Եւ հրամայեաց արկանել զնա ի հաւուզն եւ խեղել ի ջուրն: Եւ որբան հանէր գլուխն

<sup>1</sup> Զաքարիա, Ա. 50:

<sup>2</sup> Զաքարիա, Ա. 51-52:

<sup>3</sup> Դարանապի, 471:

ի ջրոյն, եւ սպասաւորքն խանին կոխէին ի ջուրն<sup>1</sup>։

Այնուհետեւ խանը հրամայում է կողոպտել, «իբրեւ ի մօրէ մերկացուցանել», 12 թոփուղաւորներին, իսկ Մեխլուին կաթուղիկոսի խնդիրով հանում են ջրից եւ զինուորներ են նշանակում, որ Երեւանի երկրից հեռացնեն։ Մինչդեռ սպասելի էր, որ այսպիսի անարդանքից ու բռնութիւնից յետոյ աղանդապետի երկրպագուների թիւը պակասէր, ընդհակառակը, տեսնում ենք, որ զմայլած ամբոխը չի լքում նրան, այլ ուղեկցում է մինչեւ Քանաքեռ։ Այս աւանն էր եկել նաեւ կաթուղիկոսը խանի զինուորներով, որնք նրան այնտեղից հանելով՝ քշում են նիդ գաւառը — Աբարան։

«Եւ գնաց մինչեւ ցԱրզըրում եւ ասէր. գնամ Երուսաղէմ։ Եւ էր յԱրզըրում Կեղացի Պօղոս վարդապետն, եւ աստի գրեցին առ նա վասն նորա չարութեանն։ Եւ նա կալեալ զնա՛ էառ զվեղարն եւ զփիլոնն եւ պատուիրեաց ուխտաւորացն Երուսաղէմի ոչ ընդունել զնա ընդինքեանս։ Եւ նա այսպէս կորեաւ եւ բարձաւ ի միջոյ՝ ընկալեալ զյաւիտենական կորուստն<sup>2</sup>։»

Զաքարիան Մեխլուին աչքից կորցնում է Երուսաղէմի ճանապարհին, իսկ Դարանաղցին շարունակում է նրա հետագայ օրերի ու արարքների մասին նորանոր տեղեկութիւններ հազրդել։ Բանից գուրս է գալիս, որ շարժումը կաթուղիկոսով, խանով ու ֆերրաջներով չէ վերջանում։ Աղանդաւորական խմորը ծաւալում է։ Եւ ինչպէս 1250 թուականին, Դաւիթ Ծարեցու ժամանակ, հանդէս են գալիս կուսակուն հոգեւորականութեան տեսաբաններն ու պարագլունները — «մեծ վարդապետն վանական», «եպիսկոպոսն Հաղբատայ տէր Համազասպ», «Թաթի վանից եպիսկոպոս տէրն Գրիգորէս», «Վարդապետն Վարդան, զօր Յօժար որդին կոչէին, ինքը՝ պատմագիր Կիրակոս Գանձակեցին եւ ուրիշները, որնք սաստ, մեղադրանք ու բանադրանք են գրում մոլարին<sup>3</sup>, այնպէս եւ այժմ Մեխլուի դէմ ծաւանում են ժէ. դարի առաջին քառորդի հոգեւորական խոշոր հեղինակութիւնները։

Եւ լոյս հոգի տէր Կիրակոսն, — պատմում է Դարանաղցին, — եւ Սարգիս Ճգնաւոր Եպիսկոպոսն եւ Պօղոս վարդապետն եւ Մովսէս

վարդապետն եւ ամենայն անապատաւորք սաստկական եւ յանդիմանական գիր ուղարկեցին ի վերայ իւրն եւ կամակցացն՝ վասն անաստուած գործոցն, զօր առնէր, եւ ապա հազիւ շիջաւ չարն<sup>4</sup>։

Այստեղ յիշած Կիրակոսը, Սարգիսը, Պօղոսն ու Մովսէսն անկամակած Կիրակոս Տրապիզոնցին, Սարգիս Ցարենեցին, Պօղոս Բարեցին ու Մովսէս Խոտանանցին են, որոնց այնքան էջեր է նուիրում Առաքել Դաւրիժեցին<sup>5</sup>։

«Եւ զղջացաւ, ասում է «Ճամանակագրութեան հեղինակը աղանդապետի մասին, եւ գնաց յԵրուսաղէմ։ Եւ անդ շատ ոք գանգատէր էին Գրիգոր Եպիսկոպոսին յԵրուսաղէմայ, եւ նա ի շղթայս էր եղեալ եւ ի բանդի արկեալ, զի տացէ ի ձեռու գարոնից։ Կա ուխտական տօվլաթաւորքն բազում աղանդապետի հազիւ զերծուցեր էին ի ձեռանէ Գրիգոր Եպիսկոպոսին, եւ եկեալ էր ի Հալապ։ Եւ մեր երկրէն վաճառական Սափարն ասաց, թէ՝ ի Հալապ ես բերի մինչեւ ցԱմիթ եւ անտի ի յետ անյայտ եղեւ եւ ոչ ոք գիտաց, թէ ուր գնաց<sup>6</sup>։»

Այսպիսով աղանդապետի վախճանը պարուրուած է մժութեան նոյնպիսի քօղով, ինչպէս եւ նրա իսկական անունը։ Ինչ վերաբերում է «Մեխլու», մականուանը, Զաքարիան ու Դարանաղցին տարբեր բացատրութիւն են տալիս սրան։

Լատ Զաքարիայի՝ «ինքն զգեցեալ էր զմազեցնս եւ ի սիրտ մազեղէնին հաստատեալ էր երկուս բեւեռոս երկաթեայ՝ հնարիւք եւ ցուցանէր ամենցուն ասելով։ Այսպէս արժան է զգենուլ արեղայիցն։ Եւ այսպէս տարածեցաւ իսաբերայ անուն նորա ի մէջ տաճկաց եւ քրիստոնէից, որ եւ տաճիկ(ք) կոչէին նմա Մեխլու բարայ, իսկ հայք՝ Մեխլու վարդապետ<sup>7</sup>։»

Իսկ ըստ Դարանաղցու՝ «Միլոյ վասն այն կոչէին, որ տէգ ունելով ի ձեռին, որպէս նիշպակի եւ նովաւ հարկանէր մահուամբ զսեւագլուխին . . . վասն որոյ Միլոյ կոչեցին իբր քաջութիւն համարելով<sup>8</sup>։

Երևանան։

ԹԱՐԴՈՍ ԱԽՈՎԱԿԻԿՆԱՆ

(Ծարունակելով)։



<sup>1</sup> Զաքարիա Ա, 51։

<sup>2</sup> Զաքարիա, Ա, 53։

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի. «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1910, էջ 311։

<sup>4</sup> Հաքարիանաղցի, 472։

<sup>5</sup> Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ «Պատմութիւն», Վաղարշապատ 1896, Գլուխ Ի. Ա. Ի. Ի. էջ 249-313։

<sup>6</sup> Հաքարիանաղցի, 472։

<sup>7</sup> Զաքարիա, Ա, 49։

<sup>8</sup> Դարանաղցի, 472։ Մերուք արքեպիսկոպոս Սմբատ անանը «Ակարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սաղմանի եւ միւս վանացից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ